ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/370 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Վենժոու Խինգջաո փլեյգրաունդ ԿՈ ԼԹԴ	Երկարությունը՝ առնվազն 1139 մմ, լայնությունը՝ առնվազն 430 մմ, բարձրությունը՝ առնվազն 845 մմ: Ճոճանակ-հավասարակշռիչը /ճոճանակ երկտեղանի/ պետք է կառուցվածքային առումով կազմված լինի ամբողջովին մետաղական հիմքից և հենասյունից, լծակային համակարգից, շարժական հարթակից և նրբատախտակե արտաքին ձևավորումից: Մետաղական բոլոր տարրերը պետք է ներկված լինեն թրծման եղանակով կիրառված պոլիմերային փոշեներկով: Փոշեներկը պետք է ապահովի բարձր դիմադրություն կլիմայական ազդեցությունների նկատմամբ և ունենա գեղագիտական բարձր տեսք: Նրբատախտակից պատրաստված տարրերը պետք է ներկված լինեն բարձրորակ, ջերմակայուն և ցրտադիմացկուն ներկով կամ բարձրորակ ակրիլատային ներկով և պատված լինեն բարձրորակ լաքով: Ծածկույթը պետք է ձևավորի ամուր և դիմացկուն մակերես: Բոլոր դուրս ցցված ամրակային տարրերը պետք է փակված լինեն պոլիէթիլենից պատրաստված դեկորատիվ խցաններով, իսկ խողովակների ծայրերը՝ պլաստիկ խցաններով: Բոլոր ամրակային տարրերը պետք է լինեն ցինկապատ: Մոնտաժը պետք է իրականացվի հենասյուների, գրունտային ամրակների կամ խարիսխների (անկերների) բետոնապատման միջոցով: Ճոճանակը պետք է նախատեսված լինի երկու երեխայի միաժամանակյա օգտագործման համար: Կառուցվածքը

		պետք է ապահովի օգտագործողների ճոճումը «առաջ-հետ» առանցքով: Կառուցվածքը պետք է ձևավորված լինի մոտոցիկլի տեսքով պատրաստված պատկերավոր ներդիրով, որը պետք է պատրաստված լինի 15–21 մմ հաստությամբ ՖՍՖ տեսակի նրբատախտակից կամ ԳՕՍՏ 3916.1-96-ի համաձայն: Ներդիրի վրա պետք է կիրառված լինի «կետեր» թեմատիկայով պատկեր՝ ուլտրամանուշակագույն (UV) տպագրությամբ կամ բարձրորակ տեխնոլոգիայով: Ճոճանակը պետք է համալրված լինի առնվազն երկու պլաստիկ, էրգոնոմիկ բռնակներով, որոնք նախատեսված են բռնվելու համար: Բռնակները պետք է պատրաստված լինեն Пластикат Пл-1А տեսակի նյութից, ունենան առնվազն 130 մմ երկարություն և առնվազն 31 մմ տրամագիծ: Ճոճանակը պետք է ունենա նաև առնվազն երկու ոտնատեղ, որոնք պատրաստված են ՖՕՖ տեսակի նրբատախտակից ներկված են արտաքին աշխատանքների համար նախատեսված խոնավակայուն ակրիլային ներկով: Ոտնատեղերի համար օգտագործվող նրբատախտակի հաստությունը պետք է լինի 15–21մմ, երկարությունը՝ առնվազն 500մմ, իսկ լայնությունը՝ առնվազն 60մմ: Ճոճանակի նստատեղը պետք է պատրաստված լինի ՖՍՖ տեսակի խոնավակայուն նրբատախտակից կամ ԳՕՍՏ 3916.1-96-ի համաձայն, առնվազն 15մմ հաստությամբ և ներկված լինի արտաքին աշխատանքների համար նախատեսված խոնավակայուն ակրիլային ներկով: Ճոճանակը պետք է կազմված լինի շարժական հարթակից և նրբատախտակե արտաքին ձևավորումից: Կառուցվածքը պետք է ունենա բարձր հարվածակայունություն և թրթռակայունություն: Վնասվածքների, ինչպես նաև հագուստի կամ մարմնի մասերի սեղմման վտանգը բացառելու նպատակով ճոճանակը շարժման մեջ դնող մեխանիզմը պետք է լինի ամբողջությամբ փակված, տեղադրված լինի արտադրանքի ներսում և նախագծված լինի ԳՕՍՏ 52169-ի պահանջներին համապատասխան: Արտադրանքը պետք է ամրացվի բետոնե հիմքին խարիսխային (անկերային) պտուտակների միջոցով: Անկերային պտուտակների անցքերը պետք է փակված լինեն պլաստիկ խցաններով՝ անվտանգության և գեղագիտական տեսքի ապահովման նպատակով: Արտադրանքը պետք է լինի հակավանդալային: Շարժական հարթակը պետք է ներկայացնի ԳՕՍՏ 16523-97-ին համապատասխան առնվազն 2,5 մմ հաստությամբ թիթեղային պողպատից պատրաստված կառուցվածք՝ առնվազն 754×260×510 մմ չափերով: Այն պետք է պատված լինի փոշեներկով: Պողպատե թիթեղները պետք է միմյանց միացված լինեն գամերի միջոցով: Շարժական հարթակը պետք է աշխատի երեխայի մարմնի քաշի տեղափոխման և «առաջ-հետ» ճոճման

			շարժումների շնորհիվ՝ ապահովելով սահուն և թեթև ճոճում՝ առանց հարվածների և հավելյալ ուժի կիրառման: Նրբատախտակե արտաքին ձևավորումը պետք է պատրաստված լինի GOUS 3916.1-96-ին համապատասխան ՖՍՖ տեսակի նրբատախտակից, առնվազն 15 մմ հաստությամբ: Նրբատախտակե բոլոր տարրերը պետք է մանրակրկիտ հղկված, նախաներկված և գործարանային պայմաններում ներկված լինեն բարձրորակ, ջերմակայուն և ցրտադիմացկուն ներկով կամ բարձրորակ ակրիլատային ներկով, այնուհետև պատված լինեն բարձրորակ լաքով: Ծածկույթը պետք է ապահովի ամուր և մաշվածադիմացկուն մակերես: Նրբատախտակե տարրերի փոխադարձ ամրացման համար պետք է օգտագործվեն պտուտակներ և գմբեթավոր (կափարիչավոր) ընկույզներ, որոնք ծածկում են ամրակների պարուրակային հատվածները և ապահովում արտադրանքի անվտանգ օգտագործումը: Նրբատախտակե արտաքին ձևավորումը և շարժական հարթակը պետք է միմյանց միացվեն պտուտակների, հեղույսների, ընկույզների և լվակների միջոցով: Տրվում է առնվազն 12 ամսվա երաշխիք: Տեղադրումն իրականացվում է մատակարարի կողմից: Տեղադրումն սկսելուց առաջ պետք է ներկայացվեն արտադրողի բնօրինակ կնիքով անվտանգության և համապատասխանության հավաստագրերը (սերտիֆիկատները): 1.Գնման գինը ներառում է ապրանքների ձեռքբերումը կամ արտադրությունը, տեղափոխումը, տեղազննումը, չափագրումը, տեղադրման աշխատանքները, հիմքերը, խարիսխները, բետոնապատումը, հավաքակցումը, ռետինե ծածկույթի իրականացումը, փորձարկումը, վերջնական չափագրումը, փաստաթղթավորումը, մաքրումը և շահագործման հանձնումը: 2. Մինչև մատակարարումը կատարվում են տեղազննում և փաստացի չափագրում, իսկ տեղադրման սխեմաները, հիմքերի հանգույցներն ու գունային լուծումները համաձայնեցվում են գնորդի հետ: 3.Սահմանային չափերից մինչև ±10% շեղումը թույլատրվում է, եթե պահպանվում են սարքերի ֆունկցիաները, անվտանգությունը, որակը և տեղավորվողությունը: 4.Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված և առանց վերականգնված բաղադրիչների: 5.Սարքերը պետք է համապատասխանեն միջազգային ստանդարտներին և ունենան համապատասխանության հավաստագրեր: 6.Խաղասարքերի բոլոր հիմնական մետաղական, պոլիմերային և փայտյա տարրերը պետք է արտադրված լինեն գործարանային պայմաններում: 7.Տեղում թույլատրվում է միայն հավաքման, տեղադրման և հիմքերին ամրացման աշխատանքների իրականացումը՝ արտադրողի տեխնիկական հրահանգներին համապատասխան: 8. Մատակարարը պարտավոր

		է իրականացնել՝ * տեղափոխումը, * բեռնաթափումը, * հավաքումը, *բետոնապատ հիմքերի և ամրացումների իրականացումը, * ամբողջական տեղադրումը, * անվտանգության ստուգումը, * շահագործման հանձնում: 9.Մատակարարը պարտավոր է երաշխավորել պահեստամասերի և սպասարկման հնարավորությունը երաշխիքային ժամկետի ամբողջ ընթացքում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/370 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		